ՀՀ ԿԳՄՄՆ <<Երևանի լեռյի անվան հ. 65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ **Գերմաներեն**
Թեմա՝ **Օտար լեզուների ուսուցման մեթոդները**

Ուսուցիչ՝ Նաիրա Սարգսյան
Ղեկավար՝ Օհաննա Ավետիսյան

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն 2

Օտար լուզուների ուսուցման մեթոդները 3

Եզրակացություն 19

Գրականության ցանկ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենին անձի ազգային ինքնությունը պահպանող կարևորագույն գործոն է,իսկ օտար լեզուները՝ մայրենիի հենքի վրա անձի բազմակողմանի զարգացման և դաստիարակության գործիք են: Օտար լեզուների ուսուցման նպատակը պետք է լինի նախապատրաստել սովորողներին միջլեզվական և միջմշակութային շփումներին,մշակույթների երկխոսությանը:

Կրթական համակարգի բարեփոխումների և արդիականացման մեր ժամանակներում առանձնապես կարևորվում է օտար լեզուների ուսուցման մակարդակի և որակի բարձրացումը, հատկապես համաշխարհային և եվրոպական միասնական կրթական տարածքին միանալու Հայաստանի ձգտման համատեքստում:

Մեր ժամանակներում ՏՀՏ-ները մուտք են գործում մարդու կենսագործունեության բոլոր, այդ թվում նաև դպրոցական որորտ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն օտար լեզուների դասերին նպաստում է ուսուցման արդյու- նավետությանը, մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունները, ճանաչողությունը, այլընտրանքային և փոխկապակցված մեթոդների կիրառման հնարավորությունները:

Մեր շրջապատում ամեն ինչ փոխվում է և զարգանում է անընդմեջ: ՈՒստի խրախուսելի է նաև նոր մեթոդներով աշխատելը: Մշակելով դասերը նոր, ինտերակտիվ մեթոդներով՝ կարձագանքենք ժամանակի պահանջներին: Աշակերտները շատ են սիրում նորություններ, շատ արագ ոգևորվում են, և դա կնպաստի կրթական մակարդակի և որակի բարձրացմանը: Իզուր չէ ասված՝ «Տվեք երեխային հետաքրքրասիրություն: Գիտելիքը նա կգտնի ինքը»:

Դասավանդման մեթոդը ներառում է ուսուցչի կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ:

Օտար լեզուների դասավանդման հետ կապված ուսումնադաստիարակչական աշխատանքի կատարելագործման կարևոր նախադրյալ է յուրաքանչյուր ուսուցչի կողմից ուսուցման նպատակների գիտակցումը,ուսուցման համակարգին նոր մեթոդական համալիրների բովանդակությանը տիրապետելը,արդյունավետ մեթոդական հնարքների

իմացությունը ,դասի և դասանյութի բոլոր բաղադրիչների, ինչպես նաև ուսումնադաստիարակչական և զարգացնող հնարավորությունների նպատակասլաց օգտագործումը։

Օտար լեզվի ուսուցման մեթոդները

Հայտնի է , որ արդյունավետ դասապրոցես կազմակերպելու և իրականացնելու համար ուսուցչին անհրաժեշտ է բազմազան մեթոդների իմացություն և համապատասխան մեթոդի ընտրություն կատարելու կարողություն ՝ ելնելով ուսուցման նպատակից, խնդիր-ներից, ակնկալվող արդյունքից և այլ կարևոր գործոններից: Որպեսզի ուսուցման կազմակերպման տարբեր եղանակներն արդյունավետ լինեն, ուսուցիչը պետք է տեղյակ լինի ոչ միայն այն մասին, թե ինչպիսի առավելություններ է տալիս դրանց կիրառումը, այլ նաև պետք է կարողանա կարգավորել այն խնդիրները, որոնք կարող են ծագել դասա-վանդման գործընթացում:

«ՈՒսուցման մեթոդ» հասկացուտյունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ինչ սովորեցնել/կրթությանբովանդակություն/,ինչի համար սովորեցնել/կրթության նպատակներ/ և ինչպես սովորեցնել /ուսուցման մեթոդիկա/:

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ,ձևեր, եղանակներ:Հանդիսանալով ուսուցման միջուկը՝ մեթոդը իրաի է կապում ուսուցման նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը:

Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա: Դրանք են.

.ուսուցման նպատակները և խնդիրները, բովանդակությունը

.ուսումնական նյութի քանակը և բարդությունը

.սովորողների պատրաստվածության մակարդակը

.ուսումնական ժամաքանակը

.սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները

.ուսուցման կազմակերպան պայմանները

.ուսուցիչ- աշակերտ հարաբերությունները

.ուսուցչի պատրաստվածության մակարդակը

ՈՒսուցչի ընտրությանն առաջարկվող մեթոդները ուղղված են համագործակցային լեզվուսուցման խնդիրներն իրականացնելու նպատակին, կազմում են նման մեթոդների շտեմարանի մի մասը միայն։

1. Կանխատեսման ուղեցույց2.

Մտագրոհ

3.Շրջագայություններ՝ գրքի բաժիններով4.

Հասկացության/սահմանման քարտեզագրում

5.Փոխներգործուն ընթերցանության նշաններ 6.

Հնգյակների մեթոդ7.

Խճանկար

8.ԳՈՒՍ /Գիտեմ – ՈՒզում եմ սովորել – Սովորել եմ/ 9.

Երկխոսություն

10.Մտածի՛ր – զույգ կազմի՛ր – հաղորդի՛ր

11.ԴՀՀԹ/ Դեր – Հանդիսատես – Ձև - Թեմա/ 12. Կարճ

դասախոսություն

13. Պրիզմա

14. T-աձև աղյուսակ 15.

Վենի դիագրամ 16.

Դերախաղ

17. Ձնագնդի

18. Մտածող գլխարկներ

19.Ելքիքարտերիլրացում

20. Խթանում — Իմաստի ընկալում — Կշռադատում/ԽԻԿ/ համակար

Ներկայացնենքուսուցմանգործընթացիկազմակերպանմիշարքտեսակներ։

1.Ինքնուրույն աշխատանք

Այս աշխատանքի արդյունքում աշակերտները ձեռք կբերեն ինքնուրույն աշխատելու կարողություններ։ Այն կարելի է հանձնարարել անհատին ,զույգին կամ խմբին։ Տրվող առաջադրանքները չեն տարբերվում միմյանցից,բոլորը միևնույն առաջադրանքն են կատարում։

Առաջադրանքն ընտրելիս հաշվի չեն առնվում աշակերտների անահտական առանձնահատկությունների ու կարողությունների տարբերությունները։

2.Զույգերով աշխատանք

Զույգերով աշխատանքի ընթացքում նույն ընդունակություններով երկու աշակերտ կատարում են միմյանց հետ համագործակցելով: Միասին սովորող զույգերի աշակերտ-ներից մեկն իր ընդունակություններով զիջում է մյուսին: Ավելի բարձր ընդունակություն-ներով աշակերտը կատարում է «ուսուցչի» դերը: Զույգերը կարող են ձևավորվել մշտա-

պես կամ ժամանակավորապես: Աշխատանքի այս ձևը կարելի է կիրառելօտար լեզվիդասաժամերին՝ որևէ տեքստ կամ տեղեկատվական աղբյուր ուսումնասիրելիս: 3.

Անհատականաշխատանք

Յուրաքաչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ և սովորելու անհատական ոճ: Այս փաստը պետք է հաշվի առնել բարձր կամ թույլ ընդունակություններով աշակերտ-ների հետ աշխատելիս: Աշակերտի անհատական ընդունակությունները զարգացնելու համար կազմված ծրագիրը կոչվում է ԱՈԻՊ/անհատական ուսումնական պլան/: Անհա-

տական աշխատանքը կարելի է կիրառել շերտավոր ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ժամանակ է հատկացնում թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին, իսկ լավ սո-պվորողներին հանձնարարում է ինքնուրույն աշխատանք, որը նշված է ԱՈԻՊ-ում ՝ վեր-ցըրված այլ դասագրքից:

4. Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը մի տեխնոլոգիա է, որի միջոցով գերազանց հաղորդակցություն է ձևավորվում սովորողների միջև և ստեղծվում է ակտիվ թիմային աշխատանք: Համագործակցային ուսուցումը կատարվում է փոքր խմբերով, որտեղ տարբեր մակարդակի աշակերտներ ենմասնակցում:

Գաղտնիք չէ, որ թիմային աշխատանքն ունի դրական ազդեցություն սովորելու ժամանակ, քանի որ այն ստեղծում է մի միջավայր, որտեղ սովորողները սովորեցնում և բացատրում են միմյանց անհասկանալի երևույթները, հասկացությունները և այլն: Այն ամրապնդում է նոր տեղեկատվությունը կամ գիտելիքը և խրախուսում է աշակերտներին արժևորել թիմային աշխատանքը և հասնել առավել բարձր արդյունքների՝ ձևավորելով այնպիսի հմտություններ,

որոնք կարևոր են հետագա մասնագիտական գործունեության համար: Նարնք դառնում են ավելի

պատասխանատու, վերահսկում են ժամանակը, ավելի արդյունավետ են պլանավորում հետագա աշխատանքները։

Թիմային աշխատանքի շնորհիվ աշակերտները զարգացնում են միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու կարողությունները՝ օտար լեզվի դասավանդման կարևոր, եթե ոչ ամենակարևոր նպատակը։ Ուսուցչը պետք է խրախուսի խմբի բոլոր անդամների ակտիվ մասնակցությունը, օժանդակի սովորողներին անհրաժեշտության դեպքում։ Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը ժամանակատար է։ Երբեմն աշակերտները վիճաբանում են որոշումներ կայացնելիս, նրանց ընկալումները տարբեր են, արդյունքում ուսուցչի օգնությամբ հանգում են ճիշտ եզրակացության։

Թիմային աշխատանքը, որը համագործակցային ուսուցման հիմնական ձևն է, օգնում է յուրացնել համեմատաբար բարդ լեզվական նյութեր, օրինակ՝ <<Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք>> թեման ուսումնասիրելիս, սովորողները թիմային աշխատանքով յուրացնում են այն՝ համեմատելով մայրենի լեզվի կամ այլ լեզվի հետ՝ միմյանց մանրակրկիտ բացատրելով։

5. Ուսումնական խաղերի տեսակներ

Շատ ուսուցիչներ թեմաները սովորեցնում են խաղերի միջոցով՝ հատկապես ատրրական դասարաններում։ Խաղերի միջոցով սովորողները ըմբռնում են նյութը, նույնիսկ առանց գիտակցելու։ Խաղերը պետք է լինեն մատչելի, տարիքին և գիտելիքին համապատասխան։ Նոր նյութի յուրացումը հեշտացնող խաղային վարժությունները, խաղերը, ինչպես նաև հետաքրքրաշարժ վարժություններն օգտագործվում են աշակերտներին խրախուսելու, գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով։ Օրինակ՝

1.Գրատախտակի վրա գերմաներեն գրվում են աշխարհագրական անուններ, որոնց վերջնատառը պետք է լինի նոր բառիսկզբնատառը։

2. Գրատախտակի վրա գրվում են երկրների անուններ։ Աշակերտները պետք է գրեն այդ ընտրված երկիրը բնութագրող բառեր և արտահայտություններ, ինչպես նաև տեսարժան վայրերի անուններ։ Կհաղթի այն խումբը, որը ավելի շատ բառեր կգրի։

6. Դերախաղը՝ որպես ուսուցման ձև

Ստեղծագործական դերախաղը գիտելիքը կամ ընթերցածը անձնավորելու փորձ է։ Դերախաղն արդյունավետ ձև է, որը խրախուսում է աշակերտներին ստանձնել դերեր՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում։ Դերախաղի, ինչպես նաև գործնական աշխատանքի կիրառման համար հարց է ծագում արդյոք այն պետք է նախորդի, թե՞ հաջորդի ուսուցչի կողմից նոր թեմայի ներկայացմանը կամ հաղորդմանը։ Համաձայն ավանդական տեսակետի, դերախաղը պետք է անցկացնել միայն աշխատանքն ավարտելուց հետո. ավելին, անհնար է որևէ բան ներկայացնել, երբ աշակերտները դեռևս չեն յուրացրել տվյալ նյութը։ Այս դեպքում դերախաղը դառնում է անհետաքրքիր, և հակառակը, եթե աշակերտները իրենք են որոշակի իրավիճակ ներկայացնում և համադրում են իրենց անձնական փորձի հետ, այն դառնում է գրավիչ և ավելի հետաքրքիր։

Տարբեր իրավիճակային դերախաղերը օգնում են.

- որոշումներ կայացնել
- ներկայացում պատրաստել՝ տքստերի բովանդակության հիման վրա, օրինակ՝ գերմաներեն դասին նոր բառեր սովորելիս՝ <<Խանութների անունները>> թեմայով, 5-րդ դասարանի աշակերտները ներկայացնում են փոքրիկ դերախաղ՝ նոր բառերը կիրառելով հանրախանութում՝ գնումներ կատարելու ժամանակ,
- լուսանկարներ կամ պաստառ/հավաքածուկիրառել,
- դատախաղ կամ բանավեճ նախաձեռնել և այլն։ 7.

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը

Պետք է գտնել բազմազան միջոցներ տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու համար, հատկապես՝ համացանցը ինչպես նաև հեռուստածրագրերը և զանազան հաղորդումները։ Համակարգիչները և հատկապես համացանցը մեծապես օգնում են օտար լեզուներ դասավանդելիս, օրինակ՝ հայտնի մարդկանց կյանքի մասին տեղեկություններ իմանալու համար կարելի է կիրառել հարցերի ձևեր։ Ուսուցիչը պատրաստում է կարճ թեստ հայտնի մարդու կյանքի մասին։ Լեզվի մակարդակը և թեստի բարդության աստիճանը կարող են համապատասխանեցնել աշակերտների լեզվական իմացության

մակարդակին և

տարիքին։ Աշակերտները կատարում են թեստային աշխատանքը՝ որոնելով տեղեկությունները համացանցում։ Թեստն ավարտելուց հետո ամբողջ դասարանը ստուգում է պատասխանները։

Ըստ հաջորդ օրինակի՝ աշակերտները բաժանվում են խմբերի, ընտրում են այն գործչին, որի մասին նրանք ցանկանում են ավելի շատ տեղեկություններ իմանալ (ուսուցիչը կարող է աշակերտներին տրամադրել անունների ցանկ, որտեղից նրանք

կարող են ընտրություն կատարել՝ աշխատանքն առավել արագ և համակարգված կատարելու նպատակով)։ Նրանք կայքում որոնում են տեղեկություններ այդ անձի մասին և նրա վերաբերյալ կազմում են թեստ։ Ի վերջո, նրանք տպում են թեստերը, փոխանակում և փորձում են լրացնել դրանք։ Թեստերը կարող են փոխանցվել մեկ աշակերտից մյուսին,և նրանք կարող են քվեարկել ամենահետաքրքիր կամ լավագույն թեստի օգտին; Ըստ մեկ այլ օրինակի առաջադրանքը կատարելու համար աշակերտները կարող են որոնել տեղեկություններ և նկարներ իրենց հայրենի քաղաքի մասին և ներբեռնված տեքստը թարգմանել պահանջված լեզվով։ Թարգմանության համար թույլատրվում է օգտվել համացանցում առկա միալեզու կամ երկլեզու բառարաններից։

8. Ֆիլմեր և տեսանյութեր

Ֆիլմերը, հատկապես կարճամետրաժ ֆիլմերն ու տեսանյութերը նույնպես նպատակահարմար են կիրառման համար։ Վերջիններս զարգացնում են լսել- հասկանալու կարողությունները և հարստացնում են բառապաշարը։ Օտարալեզու ֆիլմերը օգնում են աշակերտներին լսելու պարզ և ճիշտ արտասանությամբ խոսք։ Միջին դասարանների աշակերտները սիրում են կարճամետրաժ մուլտֆիլմեր և անիմացիաներ դիտել, մինչ դեռ ավագ դասարաններում աշակերտները օգտվում են նորությունների հեռարձակումներից։

9. Հեռուստաձրագրիրի կիրառումը

Աշակերտներին հնարավորինս լավ կրթելու լավագույն միջոցներից մեկը հեռուստացույցն է, որի ճիշտ կիրառումն օգնում է սովորողին նյութը լավ ըմբռնել։ Հեռուստաձրագրերը ևս սովորողներին ապահովում են իրական երկխոսությամբ,

ճիշտ առոգանությամբ արտասանված խոսքով: Մեկ այլ առավելությունն այն է, որ հեռուստածրագրերի մեծ մասը համեմատաբար պարզ և մատչելի լեզվով են: Օտար լեզուների համար լավագույն հեռուստաալիքներից են Kindersendungen, BBC, CNN, Discovery planet, Viasat History, Nickelodeon,

10. Սահիկաշարքերի (slides) օգտագործումը

Շատ ուսուցիչներ օգտագործում են սահիկաշարքեր դասապրոցեսի ժամանակ: Այն նախապես պետք է կառուցված լինի դասի թեմային համահունչ: Դա ավելի հարմար է, քան անընդհատ գրատախտակին գրելը: Այն պետք է հնարավորինս պարզ և մատչելի պատրաստել: Անհրաժեշտության դեպքում օգտագործել ցուցափայտ: Պետք է առանձին նախադասություններ և բառեր օգտագործել, տառաչափը մեծ ընտրել (24 և բարձր): Կարևոր միտքը շեշտելու համար կարելի է գույներ օգտագործել: Կարելի է պատրաստել աղյուսակներով կամ դիագրամներով: Յուրաքանչյուր սահիկաշարք պետք է ունենա սկիզբ, միջնամաս և ավարտ, տևի 15-20 րոպե: Օրինակ՝ գերմաներեն դասի համար կարելի է պատրաստել սահիկաշարք <<Գերմանիայի տեսարժան վայրերը>> վերնագրով: Ուսուցիչը ցույց կտա այն՝ մեկնաբանելով:

11. Գծապատկերների, աղյուսակների կիրառում

Աղյուսակների ամենից հաճախ են օգտագործվում, որոնք շատ մատչելի և հեշտ են ընթերցվում և մեկնաբանվում: Դրանց շնորհիվ շատ սովորողներ կարողանում են հեշտությամբ ըմբռնել նյութը առանց մանրակրկիտ բացատրության: Գծագիրներն օգտագորրծվում են որպես վիզուալ ուսուցման ձևեր, որոնք փոխկապակցված են մի շարք թվերի և միավորների հետ: Առավել տարածված է Վենի Դիագրամը: Վենի Դիագրամն արդյունավետ միջոց է նկարագրելու, համեմատելու և խմբավորելու տարբեր երևույթներ՝ ըստ իրենց բնորոշ գծերի: Կարելի է նկարագրել տարբեր առարկաներ, մարդկանց, պատմական իրադարձություններ, գաղափարներ կամ ֆիզիկական հատկանիշներ: Հարմար է քերականական կանոնների, պատմության ժամանակագրման համար, որի միջոցով ավելի լավ է տպավորվում նյութը, օրինակ՝ ցուցադրել հայերեն, ռուսերեն, գերմաներեն լեզուների ժամանակաձևերի տարբերություններն ու ընդհանրությունները

12. Աշխատանքային թերթիկների տարբերակվածմշակում

Ինչպե՞ս կազմել երեք տարբեր մակարդակներով աշխատանքային թերթիկներ/ քարտեր՝ ուժեղ, միջին և թույլ աշակերտների համար: Կարելի է կազմել աշխատանքային թերթիկները՝ օգտագործելով գունավոր մատիտներ և պատկերելով տարբեր նկարներ: Շատ կարևոր է պահպանել միևնույն չափը: Երբեմն աշակերները իրենք կարող են կազմել քարտեր, օրինակ՝ ածականների հետ աշխատանքներն ավարտելուց հետո նրանք անցնում են ցանկերով և ընտրում իրենց կարծիքով ճիշտ նկարագրող ածականները: Աշակերտները գրում են իրենց անունները և համապատասխան ածականները փոքր քարտերի վրա և հանձնում ուսուցչին: Ուսուցիչը խառնում է քարտերը և կարդում առաջին քարտում նշված ածականները: Աշակերտները կռահում են, թե իրենց որ դասընկերոջն են նկարագրում այդ ածականները: Առաջինը կռահող աշակերտը կարող է կարդալ հաջորդ քարտը և այլն: Մեկ այլ օրինակ, աշակերտները քարտերի վրա գրում են այն ածականները, որոնք, նրանց կարծիքով նկարագրում են իրենց, սակայն քարտերի վրա չեն նշում իրենց անունները: Այնուհետև սկսում են դասարանում բաժանել քարտերը և կարդալ ածականները: Նրանք կռահում են, թե ով կարող է լինել այդ անձը և քարտի հետևի մասում գրում անունը, այնուհետև փոխանցում են հաջորդ աշակերտին: Երբ բոլոր աշակերտները տեսնում են քարտերը, նայում ենյուրաքանչյուր քարտին և քննարկում թե արդյոք իրենց ճիշտ են կռահել:

13. Խաչբառերի լուծում

Խաչբառերի լուծումը պահանջում է մի շարք կարևոր հմտություններ և իհարկե գիտելիք, որոնք են բառիմաստի իմացություն, ուղղագրություն և այլն: Սովորողը նախ պետք է հասկանա տերմինները, ապա հասկանա պահանջը: Այլ կարևոր հմտություններից են ընտրությունները մեկնաբանելը, հետևություններ անելը: Այն նման է խաղի: Այն համարվում է ակտիվ ուսուցման ձև և աշակերտների է ներգրավում դասապրոցեսի մեջ՝ զարգացնելով նրանց ակտիվ բառապաշարը: Օրինակ՝ գերմաներեն դասաժամին հագուստների անունները սովորելիս ուսուցիչը կազմում է խաչբառ տրված նոր բառացանկով:

14. Լուսանկարների օգտագործում

Լուսանկարների օգտագործումը զարգացնում է սովորողի երևակայությունը և ստեղծագործական միտքը: Կարելի է համացանցից վերցնել և յուրաքանչյուր

աշակերտի մեկ լուսանկար տրամադրել։ Սա հիմնականում կիրառվում է շարադրություններ և էսեներ գրելու ժամանակ, որի հիմքը լուսանկարն է։ Նպատակն է զարգացնել նկարագրողական, վերլուծական և ստեղծագործական էսե գրելու կարողությունները։ Օրինակ՝ 9-րդ դասարանում գերմաներենի դասին ցուցադրվում են հայ ականավոր գործիչների լուսանկարները, որոնց հիման վրա աշակերտները բանավոր ծշխոսք են կառուցում, կենսագրությունն են պատմում կամ գրում շարադրություն։

15. Ցուցահանդես դասարանում

Շրջագայությունը դասարանում և ցուցահանդեսի դիտումը հարստացնում է աշակերտների մտահորիզոնը, նպաստում է թեմայի լավ յուրացմանը։ Սա գործնական աշխատանքի համար լավ և արդյունավետ միջոց է։ Արդյունքում ստացվում է թեմային համապատասխան պաստառ կամ բացիկ։ Սովորողները կարող են խմբավորվել ըստ թեմաների, որպեսզի իրենք նյութեր հայթհայթեն տվյալ թեմաների շուրջ համացանցից կամ այլ աղբյուրներից։ Երբ աշխատանքը պատրաստ է, յուրաքանչյուր թեմա ներկայացնելու համար ընտրվում են աշակերտներ։ Օրինակ՝ 8-րդ դասարանում կազմակերպվում է ցուցահանդես, որի ժամանակ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր պաստառը՝ սիրելի տեսարժանա վայրի մասին։ Յուրաքանչյուր աշակերտին տրվում է 2-3 րոպե ներկայացնելու համար։ Ցուցահանդեսը լինում է դասարանում, պաստառները փակցվում են պատերին։ Ուսուցիչը լավագույն երեք աշակերտներին խրախուսելու համար պատվոգրեր կամ այլ մրցանակներ է հանձնում։

16. Գովազդի ստեղծում

Աշխատանքի այս ձևը հարմար է օտար լեզուների դասավանդման համար։ Օրինակ 1. Աշակերտները գտնվում են ռեստորանում և նրանց որպես տնային աշխատանք տրված ուտեստները ներառված են ճաշացանկում, սակայն բոլորը հորինված անվանումներով։ Հյուրերին ծանոթ չեն ուտեստները, ուստի մատուցողը պետք է բացատրի, թե ինչ բաղադրություն ունեն դրանք։ Օրինակ 2. Աշակերտները համացանցում ուսումնասիրում են Փարիզի, Հռոմի, Աթենքի և այլ քաղաքների տեսարժան վայրերը և դուրս բերում կարևոր կամ հետաքրքիր փաստերը։ Նրանք պետք է ներբեռնեն կոնկրետ թեմային առնչվող նկարներ,

տեքստեր և ստեղծեն

սահիկաշարք՝ գովազդելով տվյալ քաղաք իր տեսարժան վայրերով, մշակույթով, սովորություններով: Դասի երկրորդ կեսին աշակերտներն այդ ամենը ներկայացնում են դասարանին:

Արդի գլոբալացման և միջազգային ինտեգրման պայմաններում օտար լեզվի ուսուցումն առավել քան երբևէ պահանջում է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել հաղորդակցական կարողություններ:Սա նշանակում է ,որ սովորողի համար անհրաժեշտ է ստեղծել միջավայր , որը կխթանի նրա մտածողությունը և կառաջացնի հաղորդակցվելու անհրաժեշտություն:Այս համատեքստում դիտազննական պարագաները օտար լեզվում ուղղակի անփոխարինելի են:Նրանք սովորողներին ապահովում են՝

1.Փաստական նյութերով,որոնք մեծ խթան են հաղորդակցվել ցանկանալու համար:

2. Թույլ են տալիս ուսուցչին խուսափել ծավալուն բացատրություններից և մայրենի լեզվի հաճախակի կիրառումից ,որն էլ հնարավորություն է ստեղծում սովորողին ավելի շատ ներգրավվել հաղորդակցական կարողությունները ձևավորող և զարգացնող աշխատանքներում:

3. Լայն հնարավորություններ են ստեղծվում սովորողների հանրամշակութային և միջմշակութային իրազեկությունը բարձացնելու համար:

Այսպիսով , դիտազննական ճիշտ ընդգրկումը օտար լեզվի ուսուցման ընթացքում օգնում է ուսուցչին դասաժամը ծառայեցնել իր բուն նպատակին:

Դիտազննական պարագաներից ամենատարածվածները նկարներն ու քարտերն են:Ըստ որոշ հետազոտողների՝ սովորողները նախընտրում են գունվոր նկարներ, որոնք առնչվում են իրենց ծանոթ վայրերին, իրադարձություններին կամ կենդանիներին, և որոնց շուրջ սովորողն առնվազն ի վիճակի է խոսել իր մայրենի լեզվով: Դրանք կարող են լինել մեծ՝լեզվական նյութը բացատրելու , ինչպես նաև փոքր՝խմբային անհատական ,այնպես էլ զույգերով աշխատանքներ կազմակերպելու համար:

Դիտազննական օժանդակ պարագաները բազմազան են և նրանց արդյունվետ կիրառումը ուսուցման գործընթացում կախված է ուսուցչի փորձից, երևակայությունից և ,իհարկե,նրա ցանկությունից՝ստեղծելու բարենպաստ միջավայր ուսումնառության խթանման համար:

Գոյություն ունի լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականերեն բաժանվում են հետևյալ խմբերի .

Կառուցվածքային մոտեցում/լեզուն դիտարկվում է որպես քերականական էլեմենտների միմյանց կապակցված համակարգ/

.Քերականական թարգմանության մեթոդ

Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ սովետական ժամանակներից, որը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր , որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը:Հիմքում ընկած են բառուսուցումը ,ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան:

.Աուդիո- լեզվական մեթոդ

Այս մեթոդի էությունը նրանում է,որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը: Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներ- գրրավել ուղեղի ճանաչողական , նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որ սովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս:

Ֆունկցիոնալ մոտեցում ,որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառույթների /ֆունկցիաների/ արտահայտման միջոց

.Լեզվի իրավճակային ուսուցում – Բանավոր մոտեցում

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքն իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույնս ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

.ՈՒղղորդված պրակտիկա/փորձառություն/

Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները, մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի

ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային

/բազային/ արտահայտությունների ավտոմատտիրապետմանը։

Ինտերակտիվ մոտեցում. լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերությունների ստեղծման և հաստատման գործիք

.ՈՒղղակի մեթոդ

Նախատեսվում է ,որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման,այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով ,իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է:Մեթոդի գաղափարը օտար լեզվի «բնական» յուրացումն է ,ինչպես մայրենի լեզվի դեպքում:

.Հաջորդականության մեթոդ

Բռապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող գործողություններն անընդհատ կրկնելով:

Օր.Ամեն առավոտ ես արթնանում եմ ժամը 7-ին , լոգանք եմ ընդունում, հագնվում եմ,նախաճաշում եմ, գնում եմ դպրոց, դասերից հետո հավաքվում ենք ընկերներիս հետ և այլն: Այս նույն օրինակը կարելի է օգտագործել տարբեր ժամանակաձևերով՝ ավելի լավ յուրացման համար:

.Խոսակցական ուսուցում

Նախատեսվում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու, այլ դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համարզ: Այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները և այլն:

.Ընկղմում լեզվի մեջ

Մեթոդն օգտագործվում է տարրական դպրոցում,առաջ քաշելով երկլեզվության /բիլինգվիզմ/ տարբերակը՝ դպրոցական ծրագրով նախատեսված առարկաներն ուսուցանելով օտար լեզվով: Նույնիսկ մայրենի լեզվով ընթերցանությունը սկսում են օտար լեզվով կարդալու փուլն անցնելուց հետո:

.Լռության մեթոդ

Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում:Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում , ուսուցիչն օգտագարծում է տարատե- սակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում:Այս

ճանապարհով էլ նոր բառեր են ուսուցանվում։

.Բնական մոտեցում

Շեշտը դրվում է այն հասկացության վրա, որ սովորողը կարող է սովորելամեն ինչ: Ցանկացած նոր դաս պետք է հիմնված լինի նախորդ դասի վրա և լինի մատչելի յուրացման համար:

Ֆիզիկական արձագանքման մեթոդ

Առաջին փուլում սովորողները պասիվ ընկալում են նյութը՛առանց այն օգտագործելու: Երկրորդ փուլում նրանք պետք է արձագանքեն որոշ բառերի, հատկապես բայերին,օրինակ, դրանք կատարելով: ԵՎ միայն այս երկու փուլը հաղթահարելուց հե-տո սովորողներն իրենք են գործածում յուրացրած նյութը:

Կարդալու և պատմելու մեթոդ

Համարվում է ֆիզիկական արձագանքման մեթոդի ենթաձյուղ: Դասավանդողը հարուստ բառապաշարով փոքրիկ պատմություններ է պատմում սովորողներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ:Վերջիններս պետք է պատասխա- նեն հարցերին՛ օգտագործելով նյութի բառերը:

.Դոգմա մեթոդ

Այս մեթոդը հրաժարվում է լեզվի ուսուցման ընթացքում որևէ դասագիրք օգտագործելուց՝ շեշտադրելով դասավանդող- սովորող շփումը: ՈՒսուցողական նյու- թերը , որոնցից պետք է օգտվի սովորողը , հենց իր կողմից ստեղծված պետք է լինեն:

Ուսուցման մեթոդներ - փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում). կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և

աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի՝ հմտության և կարողության փոխանցմաննուրացմանը։

Ավանդույթի համաձայն՝ մանկավարժության ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի.

Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)

Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի)

Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ:

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Պասսիվ մեթոդ

Ուսուցման պասսիվ մեթոդ

Պասսիվ մեթոդ (սխեմա 1), սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասսիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, չնայած դրան, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս առավելությունները՝ շատ դասավանդողներ պասսիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբ սովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը:Դասախոսությունը պասսիվ ուսուցման ամենից տարածված ձևն է: Այս մեթոդը լայն տարածում ունի բուհերում, որտեղ սովորում են չափահաս, լիրաժեք ձևավորված անհատներ, որոնք տվյալ առարկան խորությամբ ուսումնասիրելու հստակ նպատակ ունեն:

Ակտիվ մեթոդ

Ուսուցման ակտիվ մեթոդ

Ակտիվ մեթոդ սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ։ Եթե պասսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են։ Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին։ Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ։ Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր։

Ինտերակտիվ մեթոդ Ուսուցման

ինտերակտիվ մեթոդ

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ, ինտերակտիվ, նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ։ Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը։ Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է։ Դասավանդողը մշակում է նաև դաս պլանը (սովորաբար այն կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում ուսանողը սովորում է նյութը)։ Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից։ Ինտերակտիվ վարժությունների և սովորական նձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան

ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒսուցչի կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները խթանում են աշակերտերի ուսուցման գործընթացը: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանք ընտրելիս պետք է հաշվի առնել ոչ միայն առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները: ԵՎ իհարկե ուսուցիչը պետք է խրախուսի ստեղծագործ միտքը: Լեզուների ուսուցման գործընթացում պետք է իրականացնել նաև երեխայի ընդհանուր զարգացումը,միջառարկայական կապերի ամրապնդումը,ճանաչողական նպատակների կիրառումը:

Անհրաժեշտ է դասերը անցկացնել անձնակենտրոն ուսուցման սկզբունքներով,ապահովել աշակերտների ակտիվությունը,նպաստել,որ նրանք դառնան ուսումնառության գործընթացի ակտիվ մասնակից ,կարողանան ստանձնել սեփական ուսումնառության պատասխանատվությունը,իսկ ուսուցիչը դառնա աջակից և խորհրդատու: Այս ամենին զուգահեռ անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտի հետաքրքրությունները, հակումները, անահտական առանձնահատկություններն ու մոտիվացիան:

ՈՒսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր,օգտագործել այնպիսի մեթոդներ ,որ յուրաքանչյուրին հնարավորություն տա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Օտար լեզուն մայրենի լեզվի հետ միասին խթանում է դպրոցականների խոսքային և ընդհանուր զարգացումը և ,իհարկե, կատարելագործում է նրանց հաղորդակցման մշակույթը: Օտար լեզուն, լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը և այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջոց , նպաստում է ժողովուրդների փոխըմբռնմանը և միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանը: Մի քանի օտար լեզուների իմացությունը հասարակության համար ապահովում է արագ ինտեգրումը հանրության քաղաքական,տնտեսական, մշակութային և կրթական տարածքում:Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև միջառարկայական կապերի հարստացմանը:

Դպրոցականներին սովորեցնելով կարդալ, ունկնդրել,խոսել և գրել օտար լեզուներով, մենք հարթում ենք նրանց ճանապարհը դեպի այլ ազգային մշակույթներ

և դրանց միջոցով դեպի համաշխարհային մշակույթ, հնարավորություն ենք ընձեռում հաղորդակցվել այլ ազգերի հետ՝ միավորելու համար ջանքերը՝ հանուն երկրի վրա խաղաղության և կյանքի պահպանման։

Գրականության ցանկ

1.ՈՒսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր

2.<< Օտար լեզուները Հայաստանում>> գիտամեթոդական հանդես Երևան,2017թ.

3.Մ.Աստվածատրյան<<Օտարլեզուներիդասավանդմանմեթոդիկա>>

4.Գերմաներեն հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր,Երևան 2009թ.